

# Բագրավան/Նորշեն/

Վարչական ղեկավար՝ Արտյոմ Պետրոսյան

Հեռ 094 82 41 78

Մակերես՝ 50.5կմ<sup>2</sup>

Բնակչություն՝ 867

[bagravan.shirak@mta.gov.am](mailto:bagravan.shirak@mta.gov.am)

Համայնքի ներկայիս անվանումը – Բագրավան

Համայնքի պատմական անվանումները- Բուղդաշեն

Համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը –1860-1880

Որ համայնքներին է սահմանակից համայնքը – Անիավան, Անի Պեմգա, Ներքին Արթիկ ,Հայկաձոր  
Հեռավորությունը մայրաքաղաքից- 100 կմ.

Հեռավորությունը մարզկենտրոնից -40 կմ.

Բնակչության կազմը – հայ, եզդի

Կրթական հաստատություններ – միջնակարգ դպրոց

Բնակչության հիմնական զբաղմունքը – գյուղատնտեսություն

Համայնք Մարալիկի տարածաշրջանում, Մարալիկ քաղաքից 20-23կմ հեռավորության վրա: Համայնքի վարչական տարածքի մեջ մտնում են Բագրավան և Խարկով գյուղերը, մարզկենտրոնից գտնվում է 41կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Դարաքենդ անվանումը, Բագրավան է վերանվանվել 1947 թ-ին: Խարկով գյուղը հիմնել են Շիրակավանից եկածները 1894 թ-ինն այն անվանել Ենիքեյ (Նոր գյուղ):

Համայնքը տեղադրված է Ախուրյան գետի ձախ ափին, ալիքավոր հարթավայրում՝ ծովի մակարդակից 1460մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է: Տարեկան տեղումների քանակը 400-500մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները: Հողերը ոռոգվում են Ահագչիի ջրանցքից:

Համայնքի բնակչության նախնիների մի մասը գաղթել է Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի, Բուլանըղի, Մուշի շրջաններից, հիմնականում 1828-1830թթ և շրջակա գյուղերից: 1873 թ-ին Բագրավան գյուղն ունեցել է 185, 1926 թ-ին՝ 598, 1959 թ-ին՝ 856, 1970 թ-ին՝ 779, 1979 թ-ին՝ 816 հայ բնակիչ: Ունի դպրոց, գրադարան ,մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց: Խարկովը 1897 թ-ին ունեցել է 288, 1926 թ-ին՝ 303, 1959 թ-ին՝ 235, 1979 թ-ին՝ 33 բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 867 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 51%, կանայք՝ 49%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 29%, աշխատունակներ՝ 53%, հետաշխատունակներ՝ 18%: Ունի 86 տնտեսություն: Ունի դպրոց, կապի հանգույց:

Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը անասնապահությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 1536հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 187 և 3001 հեկտար: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Զբաղվում են նաև հացահատիկային, բանջարաբուստանային, կերային կուլտուրաների մշակությամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, զագաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Նորաշեն Ինդեքս՝ 2903